

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 70 ՏԱՐԻՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան բոլորում է հիմնադրման յոթերորդ տասնամյակը: Գոյության յոթանասուն տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին, սակայն պատվաբեր ու բովանդակաշատ ուղի է անցել, ձեռք բերել գիտական վիթխարի նվաճումներ, արժանացել համաշխարհային ճանաչման:

1935 թ. Երևանում բացվում է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը ղեկավարում է Հայաստանում ուսումնասիրություններ կատարած անվանի երկրաբան ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը:

1938 թ. Արմֆանի նախագահ է ընտրվում տաղանդաշատ արևելագետ, հայագետ ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին: ՍՍՌՄ ԳԱ հայկական մասնաճյուղը հայագիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ զբաղվում էր ֆիզիկամաթեմատիկական, երկրաբանական, տեխնիկական, բնական և գիտության այլ ճյուղերով:

Երբ դեռևս մոլեգնում էր Հայրենական մեծ պատերազմը, կարևորելով գիտական հետազոտությունների հետագա համակարգային զարգացման անհրաժեշտությունը և հրատապությունը, ՀՍՍՌ կառավարության որոշմամբ 1943 թ. նոյեմբերին հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի հիմնադիր կազմում ընդգրկվում են գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնական, իսկ գիտության նորաստեղծ կաճառի պրեզիդենտ է ընտրվում ակադեմիկոս Հ. Օրբելին:

Ակադեմիայի հիմնադրման պահին հասարակական գիտությունները ներկայացված էին Պատմության, Լեզվի և Գրականության ինստիտուտներով, հետագայում կազմակերպվում են բաժանմունքներ: Երեք տարիների ընթացքում ակադեմիան դառնում է Հայաստանի գիտական կարևորագույն կենտրոններից մեկը: 1947 թ. ակադեմիկոս Հ. Օրբելին վերադառնում է Լենինգրադ և շարունակում գործունեությունը՝ որպես աշխարհահռչակ թանգարան էրմիտաժի տնօրեն՝ լիովին նվիրվելով այդ կենտրոնի զարգացման գործին:

Ակադեմիայի պրեզիդենտ է ընտրվում տեսական աստղաֆիզիկայի 8 հիմնադիր ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանը: Մեծ ուշադրություն է դարձվում ձգբրիտ գիտությունների զարգացմանը. ստեղծվում են ինստիտուտներ բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում: Ընդլայնվում է հասարակական գիտությունների

ուղորտը. ստեղծվում են Արվեստի, Արևելագիտության, Տնտեսագիտության, Փիլիսոփայության և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում Հայաստանի գիտությունների ակադեմիան կայանում է, ունենում ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնում Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ձանաչելի դառնում արտասահմանում: ՀԳԱ-ի պրեզիդենտն ընտրվում է Գիտական կազմակերպությունների համաշխարհային խորհրդի նախագահ, իսկ գիտական, գիտակազմակերպական և հասարակական փայլուն գործունեության համար Վ. Համբարձումյանին շնորհվում է Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչում:

2008 թ. հայ ժողովուրդը մեծ շուքով նշում է հռչակավոր գիտնականի ու հայրենապաշտ հայի ծննդյան 100-ամյակը, աշխարհի գիտական հանրությանը ներկայացվում է Վ. Համբարձումյանի՝ համաշխարհային գիտության զարգացման մեջ ունեցած մեծ ավանդը:

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո, 1992 թ. ՀԽՍՀ ԳԱ վերանվանվում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա:

1993 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ է ընտրվում ձանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Նախագահի պաշտոնը նա ստանձնում է Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում: 1991 թ. քաղաքական հեղաշրջումը՝ Խորհրդային Միության փլուզումը, ծայրահեղ ծանր իրավիճակ է ստեղծում ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության ու մշակույթի բնագավառներում: Սկսվում է տնտեսության անկումը, խզվում են միջպետական կապերը, դադարում է ԽՍՀՄ հանրապետությունների ակադեմիաների համագործակցությունը: Համընդհանուր քաոսի պայմաններում առավել բարդ էր իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում՝ ղարաբաղյան պատերազմի, շրջափակման, ավերիչ երկրաշարժի պատճառով:

Տնտեսական վերափոխումներին զուգահեռ հույժ կարևոր էր հոգածությունը գիտության հանդեպ՝ պահպանել գիտական հիմնական ուղղությունները, գիտական ներուժը, նախկին գիտական կապերն ու համագործակցությունը: Պայմանագրեր են կնքվում Ռուսաստանի, Ուկրաինայի և այլ երկրների ակադեմիաների ու գիտական կենտրոնների հետ, ՀՀ ԳԱԱ-ն անդամակցում է Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերությանը՝ ապահովելով և զարգացնելով նախկին կապերը: Միջազգային կազմակերպությունների գիտական հայտերով համատեղ նախագծերի կատարման շրջանակներում (INTAS, ISTC, NATO, CRDF) սկսվում է հայ և արտասահմանցի գիտնականների համագործակցությունը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ հաղթահարվում է ինֆորմացիոն շրջափակումը և ապահովվում

է կապը գլոբալ ցանցերի հետ:

Բացվում են նոր գիտական հաստատություններ, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Էկոլոգանոսֆերային հետազոտությունների, Մանրէների ավանդադրման, Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման և Գիտակրթական կենտրոնները:

2006 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ է ընտրվում Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառի ճանաչված գիտնական ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Գիտությունների ակադեմիայի առաջ ծառայել էին դժվարությամբ ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու, դրանք խորացնելու, գիտության զարգացման արդի մարտահրավերների ոգով ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Հիշյալ բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտության բնագավառում իրականացնել բազմակողմանի վերափոխումներ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախորդ 60 տարիների ընթացքում ԳԱԱ-ն եղել է ԽՍՀՄ-ի հզոր գիտական համակարգի մի մասը, ինչով էլ պայմանավորված էր գիտականու գիտատեխնիկական մեծաքանակ կազմակերպությունների առկայությունը երկրում: Կադրերի թվաքանակը կտրուկ ու էական կրճատվել էր. եթե մինչև 1990 թ. հունվարի 1-ը ԳԱԱ համակարգում աշխատում էր 7.500 մարդ, ապա 2007 թ. նույն ժամանակահատվածում աշխատողների թիվը կիսով չափ նվազում է՝ 3.750, որոնցից միայն 2.200 էին գիտաշխատող:

Ընդհանուր առմամբ, գիտության առջև ծառայած խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ էին նրա զարգացմանը նպաստող վերափոխումներ: ԳԱԱ-ն ուներ հարուստ գիտական ներուժ. անկախության տարիներին համակարգի գիտաշխատողները գիտության տարբեր բնագավառներում գրանցել են գիտական լուրջ արդյունքներ, որոնք ձանաչվել են համաշխարհային գիտական հանրության կողմից: Բարեփոխումների գործընթացի նպատակը նաև համակարգի օպտիմալացումն էր՝ մանր, ոչ արդյունավետ գործող փոքր ստորաբաժանումների միավորումը պրոֆիլային և ակտիվ գործող, հեռանկարային ինստիտուտներին: Համակարգի ակադեմիական ինստիտուտների օպտիմալացման արդյունքում նախկինում առանձին գործող 18 գիտական հիմնարկների հիմքի վրա ստեղծվում են ավելի լայն գիտական թեմատիկա ունեցող գիտական 3 կենտրոն և 3 ինստիտուտ:

Հասարակության զարգացման գործընթացներում գիտության, որպես առաջընթացի հիմնական գործոնի, դերը բարձրացնելու նպատակով պետք է վերանայվեին գիտական կազմակերպությունների, պետության և հասարակության փոխհարաբերությունները:

Մշակվում է և 14.04.2011 թ. ՀՀ ԱԺ հաստատում է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է համակարգի իրավական հիմքերը, դրանց 10 երաշխիքները:

Գիտության ոլորտի առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից է գիտական կադրերի երիտասարդացման հարցը: ԳԱԱ համակարգում

իրականացվող միջոցառումների արդյունքում երիտասարդ գիտաշխատողների թիվը (առ 01.01.2013 թ.) կազմում է աշխատակիցների ընդհանուր թվաքանակի 29%-ը:

Վերջին տարիներին էապես բարելավվել է Գիտակրթական միջազգային կենտրոնի գործունեությունը, որը կարող է դառնալ հետազոտական համալսարան:

ՀՀ ԳԱԱ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությանը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Վերջին 5-6 տարիներին էապես ակտիվացել է ակադեմիայի միջազգային համագործակցությունը. նոր պամանագրեր են ստորագրվել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ուկրաինայի, Լիտվայի, Ռումինիայի, Հունգարիայի գիտությունների ակադեմիաների հետ, պայմանագրեր են կնքվել Ֆրանսիայի CNRS կենտրոնի, Գերմանիայի Մաքս Պլանկ ընկերության հետ: Երկարատև համագործակցության արդյունքում Ֆիզիկական հետազոտությունների, Երկրաբանության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների հետ ստեղծվել են համատեղ գիտական լաբորատորիաներ:

ԳԱԱ նախագահության առաջարկով 2007 թ. ստեղծվում է ԳԱԱ սփյուռքի բաժինը, որը պետք է խթաներ հայ գիտնականների միջազգային համագործակցությունը, իրականացներ սփյուռքահայ գիտնականներին ԳԱԱ աշխատանքներին մասնակից դարձնելու ամբողջ գործընթացը: Սփյուռքի բաժինը կորողինացնում և անմիջական կապեր է հաստատում ԳԱԱ-ի և ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամների, համակարգի ինստիտուտների և առանձին գիտաշխատողների միջև, հետևում համագործակցության իրականացմանը:

Այսօր ակադեմիայի կազմում ընգրկված են 56 ակադեմիկոս և 58 թղթակից անդամ, 40 գիտահետազոտական հիմնարկություն, որտեղ աշխատակիցների ընդհանուր թիվը 4.021 է, որից 2.462 գիտաշխատող են, 325 գիտության դոկտոր, 1.113 գիտության թեկնածու: Հրատարակչական գործունեությունն ակադեմիայի կարևոր գործառնություններից է: Այն ներառում է հրատարակչական խորհրդի, գիտական պարբերականների հրատարակումը և տպարանի գործունեությունը:

Ակադեմիայի 14 պարբերականներին ավելացել է 3 նոր էլեկտրոնային պարբերական՝ բնական (2003 թ.), ֆիզիկական և մաթեմատիկական (2010 թ.) գիտությունների բնագավառներում: ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է նաև «Բանբեր հայագիտության» հանդեսը (2013 թ.), որին մաղթում ենք հաջողություններ իր առաքելության իրականացման գործում:

**ARMENIAN REPUBLIC'S NATIONAL ACADEMY OF SCIENCES IS
70 YEARS OLD**

Armenian Republic's National Academy of Sciences has fulfilled seven decades of Service to the Nation since the time of its establishment. Within this term of seventy years, the supreme scientific center of the Republic has trodden a difficult way, though rich in honors and substantive scientific achievements meriting world-wide recognition.

In 1935 an Armenian Branch of the USSR Academy of Sciences was opened in Yerevan (ArmFan) under Academician F. Yu. Levinson-Lessing, a well-known geologist having done extensive exploration in Armenia.

In 1938 elected President of ArmFan was a talented Orientalist and Armenologist, Academician Hovsep Abgari Orbeli. The Armenian Branch of the USSR AS, along with the Armenological research, conducted active scientific investigations in physics, mathematics, geology, mechanical engineering, natural environment, and other domains of scientific knowledge.

In November 1943, with the Great Patriotic War still raging, the resolution of the USSR Government mandated the establishment of the Armenia's Academy of Sciences, highlighting the need and the urgency for the future systematic scientific exploration. At the time of establishment, the Academy recruited 23 well-known scientists, and the elected President of the newly formed constellation was H. Orbeli.

At the inception moment of the Academy the humanities were implemented by the Institutes of History, Language and Literature, with the departments to be appended later on. Within three years, the Academy had become one of the most important scientific centers. In 1947, Academician H. Orbeli returned to Leningrad to resume his employment as Director of Hermitage, the internationally renowned museum, completely submerging into the activities of this exclusive institution.

Academician Victor Hamazaspi Hambartsumian, the founder of theoretical astrophysics was elected President. The center of attention was displaced towards the development of exact sciences: a number of Institutes were established in the domains of natural and technical subjects. The scope of humanitarian disciplines was expanded very significantly by initiating the Institutes of Fine Arts, Oriental Studies, Economics, Philosophy and Law, Archaeology, and Ethnography.

Within the 46-year period of Victor Hambartsumian's Presidency, Armenia's Academy of Sciences made headway, possessing heavyweight assets, having acquired a leading role in the array of the USSR Republican Academies, and having gained recognition in foreign countries. The NAS President was elected Chair of the International Council of Scientific Organizations, whereas for his

activities in the scientific, science-organizing and public domain V. Hambartsumian had twice been awarded the title of the Hero of Socialist Labor.

In the year 2008, the Armenian Nation solemnly commemorated a centenary of the renowned scientist and the patriotic Armenian, presenting before the scientific community of the world the great contribution by V. Hambartsumian to the development of science on an International scale.

Following the declaration of the Third Republic of Armenia, in 1992, the USSR Academy of Sciences was renamed THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA.

The year 1993 saw another elected President of the Academy in the person of Academician Fadei Tajati Sarkisian, a renowned manager of research and development facilities. He accepted this Presidential position at a moment of extreme difficulty in the formation of the Third Armenian Republic. The 1991, the political upheaval and the collapse of the Soviet Union, have generated a dire situation, both in economics, and in science and culture. The ensuing economic decline stipulated the severance of intergovernmental communications, as well as the termination of cooperative links among the Republics of the Soviet Union. In the atmosphere of a complete chaos, the situation in the Republic of Armenia was complicated because of the Karabakh war, the military blockade, and the disastrous earthquake.

In parallel with the economic reforms it is important to take care of science, to retain the basic scientific orientation, the scientific potential, the former scientific links and cooperation. Multiple agreements were signed with academies and scientific centers in Russia, Ukraine, and other countries, the NRA participated with the International Company of Academies of Sciences, while securing and developing the former associations. Cooperation between the Armenian and foreign scientists was initiated in the circles realizing the joint projects through scientific queries by International organizations (INTAS, ISTC, NATO, CRDF).

Deployment of the modern information technology countered the information blockade securing connection with global networks.

Many new scientific institutions were opened, e.g., the Institute-Museum of the Armenian Genocide, ecological and environmental research, centers for microbial depositions, studies of molecular structure, and centers of scientific training.

The Incumbent President, Academician Radik Martirosi Martirosian, elected in 2006, is a renowned scientist having had an extended carrier in radio physics and electronics as well as a long-time service as the Chancellor of the State University of Yerevan.

Confronting the Academy of Sciences had been basic problems of deepening and strengthening the hard-won achievements, as well as overcoming the contemporary challenges and assignments of scientific development. Resolving the complex problems demanded implementation of multi-faceted reforms in scientific domains that should have stipulated the scientific development. It should be considered that in the preceding 60 years, the NAS RA was part of

the USSR's huge scientific system, which was the factor accountable for the rapidly growing number of R&D companies in the country. The labor force involved was downsized dramatically. While prior to January 1 1990 the NAS RA system employed 7.500 persons, on the same date in 2007 the number of the employed was halved to 3.750, including 2.200 scientific staff.

Generally speaking, to tackle the objectives confronting the science, there is a need for reforms stipulating its development. The NAS has a rich scientific potential: in the years of independence, the system's scientific personnel in different fields of science have recorded serious scientific results that have been recognized by the International scientific community. The purpose of the ongoing reforms has been the system optimization – a transition of small-scale, inefficient merging of minor subdivisions into active professional specialized long-term institutions. Resulting from the system-targeted optimization of academic Institutes, the formerly operating 18 individual scientific institutions have formed a wider-based 3 thematically uniform scientific centers and 3 Institutes.

In the processes of communal development, to raise the role of science as the leading factor of progress, a reexamination should have been made of the interrelations between the scientific organizations and public institutions.

The AR Law on National Academy of Armenian Republic was finally adopted on April 14, 2011, providing regulation and insurance of the legal foundations of the system.

One of the primary issues coming up in the domain of is the rejuvenation of scientific personnel. The measures taken by the NAS system had trimmed the number of young scientists (by the date of 01.01.2013) to 29 percent of the total stuff.

The recent years have seen a considerable improvement in the activities of the International Center of Education and Science, which can potentially become a Research University.

The International activities of the NAS RA is aimed at facilitating the participation of the academy scientists in the International programs on awarding monetary grants and other International programs. In the recent 5–6 years, the International cooperation has been substantially activated; new agreements have been signed with the Academies of Belarus, Ukraine, Lithuania, Romania, Hungary, with the CNRS Center of France, and with the Max Plank institution in Germany. Long-term cooperation with the Institutes of physical research, geology, archaeology and ethnography had resulted in the establishment of joint scientific laboratories.

As suggested by the Presidium of NAS, the Diaspora Department of NAS was established in 2007, that would have stimulated the International cooperation of the Armenian scientists, helping the Diaspora scientists to partake of the NAS work and operational procedures. The Diaspora Department is designed to coordinate and establish close connections between NAS and its foreign members, between the system's Institutes and individual scientists, as well as to monitor the cooperation and its fulfillment.

The Academy today embraces 56 Academicians and 56 Corresponding Members in 40 research Institutions, with the total number of employees reaching 4.021, whereof 2.462 are scientists, 325 Doctors of Sciences, 1.113 Candidates of Sciences. One of the important functions of the academic activities is the issue of publications. That involves the publication of scientific periodicals, recommendations of the Publishers' Council, and the printing output.

To its 14 periodic publications, the Academy has added 3 new electronic journals, in the scientific fields of Nature (2003), Physics and Mathematics (2010). By the resolution of the Government, another Journal was founded, "Banber Haiagitutian" (2013) (Review of Armenian Studies), which is warmly welcomed and congratulated on its lofty mission.